ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Երևան, 2006, 440 էջ։

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել պատմական գիտությունների դոկտոր Գ. Խուդինյանի ուշագրավ աշխատությունը, որը նվիրված է մեր ավանդական կուսակցություններից մեկի՝ ՀՅԴ-ի ստեղծմանն ու գործունեության վաղ շրջանին։ Այդ կուսակցության պատմությանն անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ՝ առավելապես սփյուռքում։ Տարագրության մեջ գտնվող ՀՅԴ գործիչներն ու հայ մտավորականները փորձել են թղթին հանձնել իրենց հիշողությունները՝ ցանկանալով բացահայտել այդ կուսակցության մեծ ներդրումը հայ ազգային-ազատագրական շարժման ու նրա գաղափարախոսության ձևավորման գործում։ Սակայն տարիների հեռվից վերականգնելով իրենց հիշողության ծալքերում մնացած իրադարձությունների աղոտ պատկերը՝ նրանք ստեղծել են սոսկ ՀՅԴ պատմության ընդհանուր ուրվագիծը։ Պատճառն այն է, որ չունենալով համապատասխան փաստաթղթեր, այդ վտարանդի գործիչներն ու հետազոտողները զուրկ էին նաև ցարական «օխրանկայի» արխիվներն ուսումնասիրելու հնարավորությունից։ Հայրենի մտավորականությունը չնայած ժամանակին ուներ այդ հնարավորությունը, բայց կոմունիստական գաղափարախոսության պայմաններում գրեթե անհնար էր անկողմնակալ գնահատական տալ հակառակորդ կուսակցության գործունեությանը։ Հայաստանի Հանրապետության անկախության 15 տարիները հնարավորություն ստեղծեցին խորքային ուսումնասիրության ենթարկել ավանդական կուսակցությունների պատմությունը։

Ներկա աշխատությունը առաջինը չէ ՀՅԴ-ի պատմությանը նվիրված ուսումնասիրությունների շարքում, սակայն ամենահետաքրքիրն ու բնութագրականն է՝ որպես անցյալի հանդեպ ամբողջական, քննական-վերլուծական հայացք։ Հեղինակը արտակարգ խորությամբ ու մանրակրկիտ բացահայտել է ՀՅԴ ձևավորման քաղաքական նախադրյալները, մանավանդ՝ կուսակցության գաղափարական ակունքները։ Այդ հարցի լուսաբանմանն է նվիրված աշխատության առաջին գլուխը, որտեղ հեղինակն անդրադարձել է ՀՅԴ-ի հայկական ակունքներին, բացահայտել է ռուսական ու արևմտաեվրոպական պատմափիլիսոփայական մտքի լուրջ ազդեցությունը կուսակցության հիմնադիր անդամների աշխարհայացքի վրա։

Հեղինակն ապացուցում է, որ եվրոպական լուսավորականության գաղափարական հենքի վրա ստեղծված XIX դ. հայ լուսավորիչներին բնորոշ արժեհամակարգը ամբողջացնում էր նոր ժամանակների հայ հավաքականության ինքնության ընկալումը։ Գ. Խուդինյանը ՀՅԴ-ի հայկական ակունքները դիտարկում է XIX դ. հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման լայն խորապատկերի վրա, որը թույլ է տալիս հեղինակին դուրս գալ ժամանակի հայ հասարակական-քաղաքական հոսանքների կողմից քննարկվող ազգապահպանման ու առաջադիմության խնդիրների անձուկ շրջանակներից և ցույց տալ, որ նոր ժամանակների հայ լուսավորականությունը հանդիսանում էր հայկականության արժեհամակարգին բնորոշ այն գործառույթների կրողը, որոնք արձանագրվել էին ինչպես հին, այնպես էլ միջնադարյան Հայաստանում։ Այսինքն՝ XIX դ. տեղի էր ունեցել ոչ թե խզում ազգային-ավանդական արժեքներից, այլ ձեռնարկվել է նրանց վերադառնալու համարձակ փորձ՝ նոր ժամանակներին բնորոշ լուսավորականության գաղափարախոսության հենքի վրա։ Սրանով հեղինակը գիտականորեն հիմնավորված հակահարված է տալիս ինչպես հայ պահ-

պանողական մտքի մեջ, այնպես էլ հետագայում՝ եվրոպական փիլիսոփայության ու քաղաքագիտության կողմից առաջադրված այն գաղափարին, որ նոր ժամանակների հայ առաջադիմական միտքը և նրա հիման վրա ձևավորված ազատագրական շարժման գաղափարախոսությունը պարզունակորեն ընդօրինակել է Եվրոպայի «վերջին խոսքը» և դրանով իսկ հայության համար ստեղծել անլուծելի հակասություն իր շրջապատի հետ։ Ցույց է տրվում, որ ոչ թե իր իդեալը միջնադարի մեջ թողած պահպանողական միտքը, այլ հենց հայ լուսավորականությունն է իրականում դարձել հայկական քաղաքակրթությանը յուրահատուկ հիմնական՝ կրկնվող օրինաչափությունների ու արժեքների կրողը XIX դ., այսինքն՝ տվյալ դարաշրջանին բնորոշ ամենակենսունակ գաղափարախոսությունը։ Հեղինակը ցույց է տալիս, որ XIX դ., հայ ազգի «գաղափարական հայրերը» ոչ թե առաջադրում էին ազգային նոր նպատակներ, այլ փորձում էին վերականգնել այն իդեալները, որոնք ավելի հին էին, քան պահպանողականների կողմից անօգուտ կերպով ֆետիշացվող միջնադարյան կրոնական համայնքի գաղափարը։ Հայոց պատմության շղթան վերականգնելու այս համարձակ փորձի՝ Խաչատուր Աբովյանով սկսված և Միքայել Նալբանդյանի, Մկրտիչ Խրիմյանի, Ղևոնդ Ալիշանի, Գրիգոր Արծրունու, Ռաֆֆու գաղափարներով ամբողջացած գաղափարական որոնումների գործընթացի բացահայտումը աշխատության ամենահաջողված բաժիններից մեկն է։

Համոզիչ է ՀՅԴ-ի հիմնադիրների աշխարհայեցողության ձևավորման գործընթացում միախառնված ռուսական ու արևմտաեվրոպական փիլիսոփայության ու քաղաքական մտքի առանձին հոսանքների բաղդատման միջոցով՝ Ն. Միխայլովսկու, Պ. Լավրովի, Մ. Բակունինի գաղափարներով հիմնավորվող ռուսական նարոդնիկության ուրույն պատմափիլիսոփայությանը ապագա դաշնակցականների տված նախապատվության պատճառների քննությունը։ Հեղինակի կարծիքով դրա հիմքում ընկած էին երկու ժողովուրդների զարգացման պատմական պայմանների ակնհայտ նմանությունները, որոնցից էլ բխում էր ցարական ու սուլթանական վարչակարգերի կողմից մարմնավորվող քաղաքական բռնության դեմ հեղափոխական պայքարի անհրաժեշտության գիտակցումը։ Այն հիմնականում արդեն անցած փուլ էր դարաշրջանի արևմտաեվրոպական մտքի, այդ թվում՝ պոզիտիվիզմի ներկայացուցիչների՝ Օ. Կոնտի, Հ. Սպենսերի և այլոց համար, որոնց աշխատություններին նույնպես ծանոթ էին ՀՅԴ հիմնադիրները։

Հեղինակը, մերժելով XIX դ. վերջերին ձևավորված հայ ազգային կուսակցությունների պատմության ընկալման մարքս-լենինյան մեկնակետը և չընդունելով ժամանակին Սփյուռքում ձեռնարկված՝ սոսկ առանձին կուսակցությունների պատմությունն ուսումնասիրելու փորձերի սահմանափակությունը, հայ ազգային կուսակցությունների ձևավորման գործընթացը գնահատում է իբրև հայոց պետականության՝ բոլոր երեք ուժերի համար ընդհանուր իդեալի կոնկրետ քաղաքական կերպավորումների մեկ միասնական շղթա։ Նրա կարծիքով, չնայած արտաքինից այդ երեք ուժերը հակադրվում էին միմյանց, սակայն խորքում ծառայում էին նույն նպատակին։ Համոզիչ փաստերով հեղինակը ցույց է տալիս, որ իրար հետևից ձևավորված՝ արմենականներ, հնչակյաններ, «Երիտասարդ Հայաստան», «Հայ Յեղափոխականների Դաշնակցություն» և վերջապես՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» կուսակցություններն ու կազմակերպությունները հայ ազգային-ազատագրական շարժման վերընթացի հաջորդական աստիճաններն էին։ Նրանց զուգահեռ գոյակցության փաստը, հեղինակի կարծիքով, աստիճանաբար փոխարինվեց ազգային-ազատագրական շարժմանը բնորոշ՝ ուժերի ու հնարավորությունների կենտրոնացման մեկ-միասնական առանցքի փնտրտուքով, որի գործառույթները 1890-ականների կեսերից իր վրա վերցրեց ՀՅԴ-ն։

Մեծ հետաքրքրությամբ է ընթերցվում աշխատության երկրորդ գլուխը, որը բացահայտում է «Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան» ձևավորման պատմական պայմաններն ու հանգամանքները, այդ թվում՝ արտաքին գործոնների, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանի շուրջ 1889-1891 թթ. մեծ տերությունների միջև ընթացող սուր մրցակցության ազդեցությունը ՀՅԴ հիմնադիր ժողովների ծավալման վրա: Հեղինակը հայտնաբերել է մի շարք կրկնվող օրինաչափություններ ու նմանություններ՝ Արևմտյան Հայաստանի ազատագրության համար 1890-ին Անդրկովկասի հայ երիտասարդության շրջանում ծավալված շարժման և ուղիղ մեկ դար անց՝ 1988-ին սկսված Ղարաբաղյան շարժման միջև, որոնց համեմատությունը ստեղծում է խորհրդածության արժանի հետաքրքրական զուգահեռներ:

Խորն ու ամբողջական է 1890 թվականի աշնանից սկսված ու մինչև 1892 թ. վերջերը տևած՝ ՀՅԴ-ի՝ որպես ուրույն կուսակցության գաղափարական ու կազմակերպական հիմքերի ձևավորման գործընթացի ուսումնասիրությունը: Հեղինակը բացահայտել է այն լուրջ հակասությունները, որոնք առկա էին 1890-ին ստեղծված *Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան ներսում* և ցույց է տվել դրանց հանգուցալուծումը 1892-ին տեղի ունեցած առաջին ընդհանուր ժողովում:

Գ. Խուդինյանի՝ որպես ուսումնասիրողի, բարեխղճությունն ու հետևողականությունը ակնհայտ է դառնում մանավանդ աշխատության չորրորդ գլխում, որտեղ նա հսկայական թվով արխիվային նոր նյութերի օգտագործման, մանավանդ՝ Վրաստանի ու Ռուսաստանի արխիվներից հայտնաբերած բազմաթիվ նոր վավերագրերի միջոցով առարկայական ձևով ցույց է տվել ՀՅԴ կառույցի ընդարձակման և արդեն 1890-ական թվականների կեսերին գրեթե համահայկական բնույթ ձեռք բերելու փաստը: Հեղինակը մեկ առ մեկ բացահայտում է Թիֆլիսից դեպի Ալեքսանդրապոլ ու Կարս, զուգահեռաբար՝ Բորչալուի, Ախալքալաքի, Ախալցխայի գավառները, և ապա՝ Երևան, Գանձակ, Շուշի, Բաքու, Նուխի և այլ բնակավայրեր ծավալված ՀՅԴ կառույցի ընդարձակման պատմությունը, յուրաքանչյուր կոնկրետ կազմակերպության հիմնադիրների շրջանակը: Համբերատար ու բարեխիղճ աշխատանքի շնորհիվ հեղինակը առանձին ենթագլուխների միջոցով վերականգնել է նաև Իրանի Ատրպատականում, Վասպուրականում, Տարոնում, Կարինում ու նրա շրջակա գյուղերում, Փոքր Ասիայի քաղաքներում, Ռումինիայում, Բուլղարիայում, Հարավային Ռուսաստանում, Մոսկվայում և այլուր 1890-ականների կեսերին արդեն ձևավորված ՀՅԴ կառույցների պատկերը ու հանգել այն համոզիչ եզրակացության, որ չնայած ՀՅԴ-ն ավելի ուշ ստեղծվեց, քան մյուս ազգային կուսակցությունները, բայց հենց նրան հաջողվեց դառնալ առաջին համահայկական քաղաքական կազմակերպությունը:

Բոլորովին նոր մեկնակետից է մոտեցել հեղինակը ՀՅԴ հիմնադիրների գաղափարաքաղաքական ժառանգության ուսումնասիրությանը իր աշխատության վերջին՝ հինգերորդ գլխում: Գ. Խուդինյանը ցույց է տալիս, որ տվյալ դարաշրջանում ՀՅԴ-ի գաղափարախոսությունը դեռևս գտնվում էր իր սաղմնավորման փուլում, ուստի ոչ թե ամփոփում էր հետագայում ամբողջացած ու կարծրացած պատկերացումները, այլ հիմնվելով «կենդանի գործի» փիլիսոփայական ելակետի վրա, փորձում է հստակեցնել այն «իդեալական ապագան», որի հիմքում ընկած էր «Ազատ Հայաստանի» դաշնակցական իդեալը: Համեմատելով ՀՅԴ վաղ շրջանի գաղափարախոսությունը այլ երկրների ու ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի տվյալ հանգրվանին բնորոշ գաղափարական որոնումների հետ՝ հեղինակը հանգում է բավական ուշագրավ եզրակացությունների, որոնք ունեն ոչ միայն գիտական մեծ արժեք, այլև

արդիական-քաղաքական հնչեղություն և բացահայտում են ինչպես հայ ազգային-ազատագրական շարժման առանձնահատկությունները, այնպես էլ նրա գաղափարաքաղաքական կապերն ու առնչությունները ազգային ազատագրության խնդրին ու սոցիալիզմի գաղափարին հետամուտ այլ կուսակցությունների ու հոսանքների հետ։

Ամփոփենք. հեղինակը ստեղծել է մի աշխատություն, որի ընթերցումը ճանաչողական մեծ արժեք ունի ոչ միայն ՀՅԴ-ի անդամների ու համակիրների, այլև Հայաստանում ներկայումս գործող կուսակցությունների առաջնորդների համար, մանավանդ՝ ՀՅԴ հիմնադիր սերնդի քաղաքական վարքագծին բնորոշ բարոյական բարձր արժեքների, հայրենիքին ու ժողովրդին անշահախնդիր նվիրվածության այն բազմաթիվ փաստերի լույսի ներքո, որոնք Գ. Խուդինյանը առարկայական ու ճշգրիտ ձևով՝ կոնկրետ սկզբնաղբյուրների ու հստակ վկայությունների հիման վրա բացահայտել ու ներկայացրել է ընթերցողի դատին։ Աշխատության խմբագիրն է ակադ. Հրաչիկ Սիմոնյանը, որի փորձն ու խորհուրդները մեծապես օգնել են հեղինակին՝ լուրջ գիտական և միաժամանակ արդիական հնչեղություն ունեցող այս աշխատության ստեղծման գործում։

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ Է. Ա.
Պատմական գիտությունների դոկտոր